

Կ-051-11.03.2019,15.04.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ ենթակետով.

«15. ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման յուրաքանչյուր տոննայի համար: Մինչև մեկ տոննայի համար, տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուր կիլոգրամի համար 14 դրամ:

բազային
տուրքի
14-պատիկի
չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից և գործում է մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 20.1. Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
2) անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
3) անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
4) բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
5) թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (USQ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով
6) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային	տարեկան

անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
7) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
7.1) խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
8) գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով
9) գարեջրի արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով
10) առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրականացման իրավունք ձեռք բերելու համար`	
ա. Երևան քաղաքում	տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով
բ. մարզկենտրոններում	տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով
գ. Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս	տարեկան բազային տուրքի 300-ապատիկի չափով
11) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում իրականացնելու իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով
12) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
13) գենետիկ ինժեներիայի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով:
13) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող՝ բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրակցված ալմաստների առք ու վաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման համար`	տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով
14) ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով

<p>15) ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման յուրաքանչյուր տոննայի համար: Մինչև մեկ տոննայի համար, տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուր կիլոգրամի համար 14 դրամ:</p>	<p>բազային տուրքի 14-պատիկի չափով»:</p>
---	---

Ա Ս Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂ՝ Կ-
 051-11.03.2019-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին հոդված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186-Ն օրենքի 20.1-րդ հոդվածում լրացվող 15-րդ ենթակետ:	Առաջարկվում է «(բացառությամբ 2523210000 ապրանքային դիրքի ծածկագրի)» բառերը փոխարինել «(բացառությամբ 2523210000, 252310000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի)» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 2-րդ հոդված:	Առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Սույն	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			<p>օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից և գործում է մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը:»:</p>		
3.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության քարտուղար Արման Աբովյան</p>	<p>Նախագծի հոդված 1-ով սահմանված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի 15-րդ ենթակետ:</p>	<p>Հանել «2523100000» բառը:</p>	<p>Չի ընդունվել: Նախագծով նախատեսված պետական տուրքով հարկվող ապրանքների ցանկից կլիներ հանումը նշանակում է կիրառել վերջինիս նկատմամբ 22 հազ. դրամ պետական տուրք ներմուծվող յուրաքանչյուր տոննա կլիների համար, ինչը կհանգեցնի կլիներից ցեմենտ արտադրող տեղական փոքր արտադրությունների փակմանը, քանի որ վերջիններիս ծախսերի հանրագումարը կգերազանցի տեղական շուկայում ցեմենտի վաճառքի գինը:</p>	<p>Չի ընդունվել:</p>

4.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության քարտուղար Արման Աբովյան</p>	<p>Հոդված 2:</p>	<p>«2020 թվականի ապրիլի 1-ը» բառերը փոխարինել «2024 թվականի մայիսի 1-ը» բառերով:</p>	<p>Չի ընդունվել: ներմուծվող ցեմենտի նկատմամբ պետական տուրքի սահմանման մասով ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում որոշվեց կիրառել ժամկետային սահմանափակում (մինչև 01.04.2020թ)` հիմք ընդունելով, որ մեկ տարվա ընթացքում ցեմենտի շուկայում փոփոխությունների դեպքում կարող է առաջանալ դրույքաչափերի փոփոխությունների կատարման անհրաժեշտություն: Ցեմենտի շուկայում նշված փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես տեղի գործարաններում տեխնոլոգիական փոփոխությունների արդյունքում արտադրվող ապրանքի մրցունակության բարձրացման, այնպես էլ` արտաքին շուկայում տեղի ունեցող փոփոխություններով: Այդ իսկ պատճառով, նկատի ունենալով, որ ցանկացած փոփոխությունների դեպքում կվերանայվեն դրույքաչափերը`</p>	<p>Չի ընդունվել:</p>
----	---	------------------	--	---	----------------------

				<p>Ժամկետային սահմանափակման կիրառումը համարվել է սկզբունքային մոտեցում, հետևաբար դրույքաչափերի կիրառման գործողության ժամկետի սահմանումը հինգ տարի (մինչև 01.05.2024թ.) համարում ենք ոչ նպատակահարմար:</p>	
5.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մաս</p>	<p>«Նոր» բառը փոխարինել «Օրենսգրքով նոր» բառերով և «վճարի դրույքաչափի բարձրացում» բառերը փոխարինել «Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում» բառերով:</p>	<p>Ընդունվել է: Օրենքների փաթեթը լրացվել է նոր՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով:</p>	<p>Ընդունվել է:</p>
6.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում</p>	<p>«22» թիվը փոխարինել «14» թվով:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>